

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

---

## ՄԵՌՆՈՂ ԵՎ ՀԱՌՆՈՂ ԼԵԳԵՆԴ

### ՎԱՐԵ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Չարենցի առաջին անդրադարձը հայրենիքի պատմությանը «Վահագն» բալլադն է՝ գրված 1916 թ.: Այստեղ Չարենցը հնարավորինս խտացված ներկայացնում է հայոց անցյալի վերաբերյալ իր պատկերացումները, որոնք հետո տասնամյակների ընթացքում պիտի «բացվեին», ավելի ընդլայնվեին նրա հետագա գործերում, մասնավորապես «Գիրք ճանապարհի» ժողովածուի «Պատմության քառուղիներով» բաժնում և հատկապես համանուն պոեմում:

Երբեմնի «հզոր, հրոտ, հրածին» աստծուց՝ Վահագնից, որը խորհրդանշանաբար ու թանձրացումն է մեր անցյալի հերոսականության ու փառքի մասին ունեցած պատկերացումների, և որն իրականում, պարզվում է, մի՞ք է, մնացել է լոկ մի «արնաքամ դիակ»: Քայքայվում, ի չիք է դառնում դարեր շարունակ գեղեցիկ անուրջներով պարուրված, երազային առասպելը՝ իրենից թողնելով լոկ մի արյունոտ դիակ, և հառնում է դառն ու դաժան իրականությունը՝ որպես այդ արյունոտ դիակը հոշոտող «քաղցած ոհմակ»: Վհա այստեղից էլ սկիզբ է առնում մի՞քի՞՝ նախորդ այս լեգենդի դեմ Չարենցի, պատկերավոր ասած, պայքարը, որը շարունակվելու է հետագայում ևս՝ թե՛ «Երկիր Նախիր» վեպում, թե՛ «Պատմության քառուղիներով» պոեմաշարում և թե՛ կյանքի վերջին տարիներին՝ մասնավորապես 1936-ին, նրա գրած որոշ գործերում: Սակայն նախքան դրանց անդրադառնալը անհրաժեշտ է պարզել, թե որտեղից է սկզբնավորվում **մի՞քի** գաղափարը, երբ է մեր գրականության մեջ առաջին անգամ հանդիպում **Նախիրին**:

**Նախիրին**՝ որպես հայրենիքի հավաքական խորհրդանշան, առաջին անգամ գրականություն է բերում Վահան Տերյանն իր «Երկիր Նախիր» շարքով: Ի՞նչ էր Նախիրին Տերյանի համար, ի՞նչ խորհուրդ ուներ այն: Այս մասին Տերյանը հանգամանորեն խոսում է իր «Հոգևոր Հայաստան» հոդվածում, որում մասնավորապես նկատում է. ««Հայության հավաքում» կամ «հայության կազմակերպում» գաղափարական իմաստով - ահա ինչ էն հասկանում ես «հոգևոր Հայաստան» ասելով: Դա այն կուլտուրան է, այն կուլտուրապես կազմակերպված ժողովուրդն է, որի գալուն մենք կուզեինք հավատալ»<sup>1</sup>: Դեռ անմարմին, անիրական մի բան էր այդ Նախիրին՝ նույն հոգևոր Հայաստանը, որն այնքան փափագելի էր Տերյանի համար, որը դեռ չկար, այլ միայն երազվում էր, որ պիտի գա: Անմիջապես հիշում

---

<sup>1</sup> Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1961, էջ 314:

ենք Տերյանի հիշյալ շարքի «Մի՞թե վերջին պոետն եմ ես» բանաստեղծության հետևյալ տողերը.

**Ահով ահա կանչում եմ քեզ  
Ցուլա, ցնորք Նաիրի՛...<sup>2</sup>**

Նույն շարքի մի այլ բանաստեղծության մեջ կարդում ենք.

**Մշուշի միջից,— տեսի՛լ դյութական,—  
Բացվում է կրկին Նաիրին տրտում...<sup>3</sup>**

Եվ կամ՝

**Երկիր Նաիրի, երազ հեռավոր,  
Քնած ես քնքուշ թագուհու նման,  
Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր  
Եվ արքայական դնեմ գերեզման...<sup>4</sup>**

Փաստորեն Նաիրին լույս ցնորք է, անհուն իղձերի լուսե արտացոլում: Նաիրին գերագույն նպատակ է՝ անհասանելի, հեռու, մի դյութական տեսիլ՝ պարուրված մշուշով: Նաիրին երազ է, տենդագին անուրջ, անսահման փափագ, որին ձգտում է Տերյանը: Նաիրիի՝ հենց այդ դյութական տեսիլ, հեռավոր երազ լինելու գիտակցումից էլ Տերյանի մեջ այն տագնապն է ծնվում, թե հանկարծ չմեռնի դեռ անմարմին այս ցնորքն ավելի վաղ, քան մարմին կառնի ու կդառնա իրականություն: Ահա սրա հեռավոր արձագանքն է Չարենցի «Թե մի՞ֆ էիր դու» տողը, որը հետագայում արդեն «Երկիր Նաիրի» վեպում պիտի ավելի զարգանար ու ձևակերպվեր որպես «ֆիկցիա», «ուղեղային մորմոք», «սրտի հիվանդություն»: Եթե Տերյանը գրում է. «Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր // Եվ արքայական դնեմ գերեզման», ապա Չարենցի «Վահագնում» այդ միջն արդեն մահացած է. դեռ ավելին, Չարենցը ոչ միայն նուրբ ու քնքշորեն՝ «արքայական» չի դնում այն գերեզման, այլև նետում է որպես կեր քաղցած ոհմակների: Սակայն այս երկու տարբեր վերաբերմունքները միայն առաջին հայացքից են թվում ուղղված միևնույն օբյեկտին՝ միջ, ցնորք, երազ Նաիրիին: Իրականում դրանք ուղղված են տարբեր երևույթների և կամ ավելի ստույգ՝ միևնույն երևույթի երկու տարբեր կողմերին: Ինչպես արդեն նշեցինք, Տերյանն իր հայտնի հողվածում մանրամասնում էր, թե ինչ է իր համար Նաիրին՝ հոգևոր Հայաստանը, և փափագում էր դրա իրականացմանը՝ գրելով. «...որի գալուն մենք կուզեինք հավատալ»: Տերյանն ստեղծում է ապագայի հայրենիքի լուսե տեսլականը՝ միաժամանակ երկյուղելով, թե կարող է այն չիրականանալ: Իսկ Չարենցի միջը պատկանում է անցյալին, դա արդեն անցյալի հերոսականության ու սին փառքի այն ցնորքն է, որ եկել է դարերով՝ անփոփոխելով Վահագնի կերպարում, և Չարենցը հենց այդ լեզենդն է նետում անդունդը, լեզենդ, որի վրա էին կանգնած «մեր կյանքի հիմերը»: Տերյանի՝ հայրենիքի կերտած կերպարը քաջ հայտնի է «Երկիր Նաիրի» շարքի հետևյալ բանաստեղծությունից.

<sup>2</sup> Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1960, էջ 235:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 230:

<sup>4</sup> Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 66:

**Չըշլացա խնդուն փառքիդ  
Անցյալ ու հին փայլով երբեք.–  
Սիրեցի հեզ, անքեն հոգիդ,  
Եվ երգերդդ մեղմ ու բեկբեկ,  
Խեղճությունդ խավար ու լուռ,  
Աղոթքներդդ դառն ու ցավոտ,  
Ջանգակներիդ զարկը տղխուր,<sup>5</sup>  
Եվ խուղերիդ լույսերն աղոտ...**

Եթե Տերյանին չեն հրապուրում հայրենի անցյալի խնդուն փայլն ու փառքը, ապա Չարենցը դրանք ընդհանրապես չի տեսնում անցյալում.

**...Բայց օրերի հեռվում ես տեսնում եմ միայն  
Ստրկություն, մոխիր, մոռացություն ու մահ  
Եվ երկրային ընթացք մի անհմաստ...<sup>6</sup>**

«Չարենցը չի սիրում անցյալը: Նա հետևողականորեն պասկազերծում է հայոց պատմական անցյալը... այն անիսկական պատմություն է համարում: Պատմության նրա շղթայի մեջ անցյալը միշտ ամենախեղճ, ամենաթույլ օղակն է, որը, երբեմն թվում է, ավելի շատ պատրանք է, քան իրականություն»<sup>7</sup>: Էլ չենք խոսում Տերյանի այնքան քնքշորեն երգած «խավար ու լուռ խեղճությունը» սիրելու մասին: Սա բացարձակապես մերժելի է Չարենցի համար: Նա ոչ միայն չի սիրում այդ խեղճությունն ու թվառությունը, որքան էլ դրանք լինեն «վեհ և ազնիվ», այլև նողկանք է տածում դրանց հանդեպ: Այս առիթով տեղին է հիշել Չարենցի օրագրային գրառումներից մեկը. «Այդ զգացմունքը մի փոքր նման է այն արգահատելի զգվանքի ու արհամարհանքի զգացմունքին, որ մարդու մեջ առաջացնում է թրթախաղում անաջողակ մարդը. տարվում է, տարվում է վերջին ունեցածը, պարզապես թուղթը չի գալիս,– և, փոխանակ խղճալու,– արհամարհանք ես զգում և զգվանք դեպի նա... Կենդանի, առողջ, նորմալ մարդը առհասարակ չի սիրում դժբախտությունն ու անաջողակությունը... – Եվ այս չէ՞ պատճառը, որ առողջ, լիարյուն ազգերը... չեն սիրում հայերին, որ հանճարեղ տանուլ տվող դժբախտներ և անաջողներ են, քստմնելի լինելու աստիճան թվառ ու անաջողակ... Եվ ի՞նչ մոլորություն, որ իբր թվառությունը վեհ է և ազնիվ... Արգահատելի է թվառությունը, ինչպես մահը– և ուրիշ ոչինչ»<sup>8</sup>: Կարսեցիների հենց այդ խեղճությունն ու ապիկարությունն է, որ Չարենցը, կարծես ինչ-որ տեղ նաև անզորությունից ու զայրույթից մղված, դաժանորեն ծաղրում է «Երկիր Նայիրի» վեպում: Հենց այդ խեղճության ու թվառության լույսի (այս դեպքում ճիշտ կլինի ասել խավարի) ներքո է Չարենցը տեսնում մեր անցյալը, որը մի՞՞ք է, միրա՞ժ, գեղեցիկ մի սուտ: Ի՞նչ է եղել առաջ: Վեպի «Առաջաբանում» Չարենցը գրում է. «Գուցե ճիշտ որ՝ միրաժ է Նայիրին. ֆիկցիա. մի՞՞ք. ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն... Իսկ նրա փոխարեն – կա այսօր մի երկիր, որ կոչվում է Հայաստան, և այդ հին երկրում ապրել են երեկ և ապրում են այսօր շատ սովորական մարդիկ՝ սովո-

<sup>5</sup> Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 229:

<sup>6</sup> Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, Եր., 1968, էջ 203:

<sup>7</sup> Ա. Եղիազարյան, Պատմության երգեհոնը, Եր., 2007, էջ 78:

<sup>8</sup> Ե. Չարենց, Նորահայտ էջեր, Եր., 1996, էջ 159:

րական մարդու սովորական հատկություններով: Եվ ուրիշ – ոչինչ: Ոչ մի «երկիր Նայիրի»– այլ միայն – մարդիկ, որ ապրում են այսօր աշխարհի այն անկյունում, որ կոչվում է Հայաստան, որը հիմա դարձել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, իսկ 1917-ից առաջ ոչ այլ ինչ էր, եթե ոչ Ռուսական Իմպերիայի մի հետամնաց ծայրամասը – և ուրիշ ոչինչ...

Ուրիշ ոչինչ»<sup>9</sup>:

Սրանով Չարենցը կարծես վերջնականապես «փակում է իր հաշիվները» նաիրյան հնօրյա միջի հետ, որն իր ստեղծագործության մեջ սկսվել էր «Վահագնով»: Սակայն, ինչպես կտեսնենք հետո, այդ միջը մի օր պիտի կրկին հառներ...

«Երկիր Նայիրիից» շուրջ մեկ տասնամյակ անց՝ 1933-ին, Չարենցը կրկին անդրադառնում է հայոց անցյալին այս անգամ արդեն «Պատմության քառուղիներով» պոեմների շարքում: Եթե դրանից առաջ գրված գործերում («Ազգային երազ», «Երկիր Նայիրի») Չարենցի հայացքն առ պատմությունն ընդգրկում էր միայն մոտակա անցյալը՝ 1910-ական թվականների պատմական-քաղաքական անցքերը, ապա այժմ նա սկսում է պատմության իր քննությունն ամենասկզբից՝ «Այն անգո առավոտից, երբ լեգենդական // Իր խարույկն է վառել մեր անգո մախախայրը», մինչև իր օրերը՝ «այս հանճարեղ ներկան»: Այս պոեմաշարի հենց համանուն պոեմում է բացվում, ընդլայնվում **Նաիրյան միջի** խտացված այն գաղափարը, որ տեսանք «Վահագն» բալլադում: Եթե փորձենք համառոտ ձևակերպել ամբողջ պոեմի էությունը, ապա կստացվի հետևյալը. մեր անցյալն «անանցյալ» է, «անդենք» ու «անհանճարեղ», պատմության ընթացքում մեր ուղին միշտ եղել է «մթին» ու «անփառունակ», մեր «փառապանծ մախնիների» մասին եղած ավանդությունները լոկ «զրույցներ են անմիտ», և մենք մի ժողովուրդ ենք, որը, անցնելով դարերի միջով «անդեկ ու անգաղափար, // Շառագունված անվերջ ուրիշների հրով», հասել է 20-րդ դար ու կանգնած է «ահա ապագայի հանդեպ // Չարմանալի՜ թեթև, զարմանալի՜ անդեմ՝ // Մերկության պես տկլոր ու անանցյալ»:

Չարենցն այս պոեմում մատնանշում է այն գործոնները, որոնք պատճառ են դարձել հայ ժողովրդի բոլոր դժբախտությունների՝ դարձնելով նրան պատմության խաղում մշտապես տանուլ տվող ու անհաջողակ ազգ, ինչպես տեսանք վերոբերյալ քաղվածքում: Դրանք են **անմիաբանությունը, ազգային սնապարծությունը և ազգային ինքնագիտակցության բացակայությունն** ու **օտարամոլությունը**: Առաջինի՝ **անմիաբանության** մասին են հուշում պոեմի առաջին իսկ տողերը.

**Պատմության քառուղիներով մենք քայլել ենք երկար՝  
Անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար...<sup>10</sup>**

Նույն այս գաղափարն է դրված նաև «Գիրք ճանապարհիի» «Պատգամ» բանաստեղծության՝ արդեն աֆորիզմ դարձած հայտնի մեզոստիքոսում: Եվ կարծես թե ոչ ոքի համար էլ գաղտնիք չէ, որ, դժբախտաբար, հայ ժողովրդին բնորոշ են եղել անմիաբանությունը, ոչ հավաքական, հատվա-

<sup>9</sup> Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Եր., 1966, էջ 13:

<sup>10</sup> Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 203:

ծային մտածողությունն ու դրանից բխող գործելակերպը: Դրա վառ օրինակները քաջ հայտնի են բոլորիս հայոց պատմության գրեթե բոլոր դարաշրջաններից. հիշենք թեկուզ Արշակ թագավորի ու հայոց նախարարների միջև եղած պայքարի ծանր հետևանքները, Պապի ողբերգական մահը, Արշակունյաց արքայատոհմի հետզհետե թուլանալն ու հայոց պետականության կործանումը, հետագայում Բագրատունյաց հարստության ու Անիի անկումը, ավելի ուշ շրջանից՝ այն իրավիճակը, որ ստեղծվեց Սյունիքում Դավիթ-Քեկի մահից հետո ազատագրական շարժման ղեկավարների գոտությունների հետևանքով... Եվ այս շարքը, ցավոք, կարելի է շարունակել:

Երկրորդի՝ **ազգային սնապարծության** մասին կարդում ենք հետևյալը.

**Եվ ես, ահավասիկ, հին գրերով այս մեր  
Իմ տողերը կոփող մի պոետ–  
Ի՛նչ խոսքերով երգեմ և ինչ տենդով պատմեմ  
Մեր անանցյալ անցյալը, մեր ընթացքը, որ էլ  
Ո՛չ մի գուսան երգով չոգեկոչի հին փառքը  
Ու կարոտով անմիտ ետ չնայի,–  
Չպանծանա այլևս, որ առանց մեզ աշխարքը  
Կլիներ պարտեզ մի ամայի...<sup>11</sup>**

Չարենցյան ձևակերպումը, թե պետք չէ կարծել՝ աշխարհն առանց մեզ ամայի պարտեզ է, առավել քան դիպուկ է: Բոլորիս էլ հայտնի են **ազգային սնապարծության** բազում դրսևորումներ՝ այն խոսակցությունները, թե մենք աշխարհի լավագույն ազգն ենք, ամենահին մշակույթն ունեցողներից մեկն ենք. երբ Չռոմը հաշվի էր նստում Տիգրան Մեծի հետ, ո՞ւր էին մյուս ազգերը, իսկի չկային էլ. Երևանն ավելի հին է, քան Չռոմը. մենք աշխարհում առաջինը քրիստոնեություն ընդունած ազգն ենք. մարդկության նախահայրն ու նախամայրը՝ Ադամն ու Եվան, հայեր են եղել և խոսել են հայերեն (19-րդ դարում այս հարցն արծարծվել է ընդհուպ գիտական մակարդակով). մենք աշխարհի միակ ժողովուրդն ենք, որը տասներկու մայրաքաղաք ունի (և հետաքրքիր է՝ ինչի մասին է վկայում դա) և այլն, և այլն: Պատկերն ամբողջացնելու համար ասվածին կարելի է հավելել նաև աշխարհի անվանի մարդկանց՝ զորավարների, քաղաքական գործիչների, արվեստագետների և այլոց ազգաբանությունը տնտղելու մոլուցքը՝ այնտեղ հայկական հետքեր գտնելու հույսով: Այս շարքը նույնպես կարելի է անվերջ շարունակել:

Եվ վերջապես երրորդի՝ **ազգային ինքնագիտակցության բացակայության** ու **օտարամոլության** մասին ահա թե ինչ է գրում.

**Դո՛ւք, որ դարեր երկար, հազարամյակներ,  
Ուրուների նման անկերպարանք  
Ապրել եք ու կանգնել օդե ապարանքներ,  
Օտար խարույկներից հայցել ոգու կրակ,–  
Որ ամբողջ ձեր գոյության հազարամյակներում  
Չեք ծնել և ո՛չ մի խոհ սերունդների համար...<sup>12</sup>**

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 204:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 205-206:

Ապա՝

**Եվ այսպես – պատմության քառուղիներով  
Անցել ենք մենք անդեկ ու անգաղափար,  
Շառագունված անվերջ ուրիշների հրով...**<sup>13</sup>

Ներկայացված երկու հատվածներում էլ հանդիպում ենք միևնույն գաղափարի տարբեր ձևակերպումներին. առաջինի դեպքում՝ «**Օտար խարույկներից հայցել ոգու կրակ**», երկրորդի դեպքում՝ «**Շառագունված անվերջ ուրիշների հրով**»: Ներկայացված օրինակներում զուտ քերականական առումով ընդհանուր է **խարույկ-կրակ** և **հուր** բառերի առկայությունը, որոնք հոմանիշներ են: Սակայն այստեղ կա մի ավելի կարևոր հանգամանք, որը չի կարելի անտեսել. երկու դեպքում էլ առկա է **օտարի** գաղափարը, որը երկրորդ կտորում արտահայտված է **ուրիշներ** բառով (այսինքն՝ այն, ինչը մերը չէ, ուրիշներինն է, այլ կերպ ասած՝ **օտար** է): Սրանում էլ ավելի ենք համոզվում, երբ ծանոթանում ենք Չարենցի՝ 1936 թ. գրած մի քանի բանաստեղծությունների: Ներկայացնենք առաջին օրինակը.

**Ի՞նչ եք կամենում դուք երկնել սակայն,–  
Դուք, նահրական ինքնության պետեր,–  
Եթե ինքնե՛րս ենք արդ՝ առած նետեր՝  
Խրախճանքի համար այլոց՝ մտել  
Արյունառո՛ւշտ, շվա՛յտ կրկեսների շրջան...**<sup>14</sup>

Սա «Անվերնագիր ներբող» բանաստեղծության վերջին հատվածն է, որն առաջին հայացքից կարծես թե որևէ ընդհանրություն չունի նախորդ օրինակների հետ: Սակայն, երբ առավելագույն ուշադրությամբ ենք թերթում «Վերջին խոսք» ժողովածուն, նկատում ենք, որ տվյալ բանաստեղծության վերոբերյալ հատվածն ունի ևս երկու տարբերակ, որոնցից մեկը մի քառատող է՝ զետեղված գրքի անմիջապես հաջորդ էջում, մյուսը՝ առանձին ստեղծագործության՝ «Իբրև հրե լեզու շիրիմների վրա» տողով սկսվող բանաստեղծության վերջին տունը: Վերջինիս և «Անվերնագիր ներբողի» գրության ժամանակը նույնն է. երկուսն էլ թվագրված են 3 սեպտեմբեր, 1936 թ.: Ներկայացնենք դրանք հերթով՝ սկսելով նախ քառատողից.

**Եթե ինքնե՛րս ենք արդ եղկ գերիներ,  
Ահավասիկ առած թշնամական թիեր,  
Ախոյաններ դարձած՝ ահա մտել  
Խրախճալույս, օտա՛ր կրկեսների շրջան...**<sup>15</sup>

Այստեղ հայտնվում է **օտար** բառը, սակայն կրկին կարող է թվալ, թե կապ չկա հիշյալ օրինակների և սրա միջև, քանի որ ընդամենը մեկ բառի համընկնումը դեռ ոչինչ չի նշանակում: Անդրադառնանք վերջին օրինակին՝ «Իբրև հրե լեզու շիրիմների վրա» տողով սկսվող բանաստեղծության վերջին տանը.

**Եթե լինելու ենք ճորտ ու դավաճան –  
Իրար ոգի լափող բորենիներ,–**

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 212:

<sup>14</sup> Ե. Չարենց, Վերջին խոսք, Եր., 2007, էջ 114:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 115:

**Եթե ինքներս ենք լոկ – խեղճ գերիներ՝  
Մտած *օտար լույսի* ու կրկեսի շրջան...<sup>16</sup>**

Ինչպես տեսնում ենք, սա արդեն «Պատմության քառուղիներով» պոեմի վերոբերյալ օրինակների օրգանական շարունակությունն է: Գրեթե նույն բառակապակցությանն ենք հանդիպում, միայն թե այն տարբերությամբ, որ այստեղ *օտար* ածականը լրացնում է *լույս* գոյականին, որն իմաստով շատ մոտ է *խարույկ, կրակ, հուր* բառերին: Սակայն լոկ բառերի ու բառակապակցությունների նմանություններն ու համընկնումները չեն, որ մղում են մեզ նման եզրակացության: Խոսքը բերված օրինակներում առկա լեզվական միավորների արտաքին սոսկական նմանության մասին չէ. արտաքին կաղապարների այդ նմանությունը նախևառաջ բխում է գաղափարից, որն ընդհանուր է ներկայացված բոլոր գրվածքների համար: Ո՞րն է այդ գաղափարը: Սեփական ոգու ինքնությանն անհաղորդ լինելը և ձգտելը դեպի այն, ինչն *օտար* է, *ուրիշինն* է, մերը չէ: Ասել է թե՛ *օտար խարույկներից հայցել ոգու կրակ, շառագունվել ուրիշների հրով* կամ մտնել *օտար լույսի շրջան*: Այստեղ *խարույկը, կրակը, հուրը* և *լույսը* գոյի՝ կյանքի, լինելության և ազգի ոգեղենության խորհրդանիշներն են<sup>17</sup>, որոնք, ինչպես տեսանք, մշտապես զուգակցվում են *օտար*-ով:

Այսպիսով, Չարենցն անդրադառնում է այն ցավոտ խնդիրներին, որոնք ձևակերպեցինք որպես *անմիաբանություն, ազգային սնապարծություն* և *ազգային ինքնագիտակցության բացակայություն* ու *օտարամոլություն*: Չարենցը հենց սրանցով է պայմանավորում հայ ժողովրդի անցյալի կորուստներն ու անհաջողությունները: Հայերին իրենց ողջ պատմության ընթացքում ուղեկցած դժբախտությունների պատճառները նա չի ձգտում տեսնել մեզանից դուրս, այլ փնտրում է հենց մեր մեջ (ի տարբերություն այլոց, օրինակ՝ Պարույր Սևակի, որն իր հայտնի բանաստեղծության մեջ գրում է. «Պարզապես մեր բախտն ուրիշ է եղել... Պարզապես մահն էր մեզ սիրահարվել»):

Այս ծանր խոհերից է ծնվել 1936-ին գրված բանաստեղծություններից մեկը, որը Չարենցը վերնագրել է հենց «Խոհ»: Սա Չարենցի երբևէ գրած ամենամռայլ, ամենաանլույս գործերից մեկն է, որը, կարծես, «Պատմության քառուղիներով» պոեմի սեղմ, ամփոփ տարբերակը լինի: Ո՛չ այդ պոեմում և ո՛չ էլ դրանից առաջ որևէ այլ երկում Չարենցը հայրենիքի ու հայրենի ժողովրդի վերաբերյալ դեռ չէր գրել այնպիսի ծանր ու դաժան տողեր, որպիսիք հանդիպում են այս բանաստեղծության մեջ.

**Ե՛վ բիրտ, և՛ գռեհ, և՛ հոռի է քո  
Ոգին՝ դարերի տաժանքից ելած,—**

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 190:

<sup>17</sup> Գրականագետ Հ. Էդոյանը նույնպես Չարենցի ստեղծագործության մեջ *կրակը* համարում է կյանքի, գոյության խորհրդանիշ: Այդ մասին նա գրում է. «Վահագն» բանաստեղծության մեջ քողագերծելով անցյալ «միֆի» կեղծիքը, Չարենցը հայրենիքը տեսնում է «անբոց» և «անկրակ» («Մահվան տեսիլ» բանաստեղծության մեջ՝ «Անբոց մորմոքը նաիրյան իմ որբ հոգու» և կամ՝ «Ու լուսավոր առավոտները իմ հոգու // Ո՞վ դարձրեց մի անկրակ իրիկնաժամ» (1.325), որը նրա պոետիկայի սիմվոլային համակարգի մեջ նշանակում է մահ (կրակի կորուստ – կյանքի կորուստ)» (տես **Հ. Էդոյան**, Եղիշե Չարենցի պոետիկան, Եր., 1986, էջ 224):

Որպես դարավոր դաշտ սմբակակոխ՝  
Բյուր բանակների ոտքով փորփրած:  
Քո վրա ընկած սերմերն հանձարեղ  
Ո՛չ ցող են տեսել, ո՛չ փայփայող գիրկ,  
Քեզ չի գուրգուրել և ո՛չ մի արև,  
Եվ ո՛չ մի քնքուշ անձրևող երկինք:  
Էլ ո՞նց ելնեին հերկերից քո բիրտ  
Ազնիվ ցողուններ՝ և՛ նուրբ, և՛ ոսկուն –  
Էլ ո՞նց մերկանար և՛ հոգի, և՛ սիրտ  
Բանաստեղծների<sup>18</sup> գերբնական խոսքում<sup>19</sup>:

Հիրավի, այս տողերը գրված են նույնքան դառնությամբ ու վիատու-  
թյամբ, որքան խորենացու «Ողբը»: Հայրենիքի այս պատկերն անչափ հա-  
րազատ է նույն «Պատմության քառուղիներով» պոեմից հայտնի նիհար ու  
բզկտված կողերով, քաղցած, քոսոտ, անբուրդ գայլի նկարագրությամբ.

**Ե՛վ բիրտ, և՛ գռեհ, և՛ հռռի է քո  
Բերքը՝ քո ցամաք կողերից ծնած...**<sup>20</sup>

Այս բանաստեղծության մեջ ևս Չարենցը խոսում է արդեն հիշված  
ախտի՝ օտարամոլության մասին. դրան ավելանում են անտարբերու-  
թյունն ու վատնելու մոլուցքը՝ ոչ միայն ոչինչ չստեղծելու, այլև նախնիներ-  
ի ստեղծածը խժռելու հոգեբանությունը.

**Սիրում են նոքա լափել հանգիստ  
Հաճույքից ճոճել վզերը ճարպոտ –  
Եվ ճարպակալած կոկորդով գոռալ.  
«Կեցցե՛ մեզ կոխող ամեն օտար ոտք»:**

.....  
**Սիրում են նոքա եռանդով խոզի  
Կողերիդ վերջին հյութերը քամել,–  
Եվ թթել ապա գառամ երեսիդ  
Որ չես ծնանում և՛ հեշտ և՛ համեղ  
Անհատների կեր, որպես մի եղեն,–  
Որ խժռեն նոքա, հավիտյան ուտեն...**

.....  
**Օ՛, քստմնելի, խոզային սերունդ,–  
Հտալիտ ժառանգորդ անզուգական հոր,–  
Այն ո՞ր երջանիկ ժողովուրդն է, որ**

<sup>18</sup> «Վերջին խոսք» ժողովածուում տպագրված է **բանաստեղծների**, մինչդեռ ճիշ-  
տը **բանաստեղծներիդ** ձևն է: Դա է հուշում բանաստեղծության տրամաբանությունը,  
որում հանդգնում ենք, երբ ծանոթանում ենք Չարենցի ձեռագրին, որը ներկայացված է  
գրքի 8-րդ էջում. պարզորոշ երևում է, որ սկզբում Չարենցը գրել է **բանաստեղծական**,  
այնուհետև ջնջել է բառի **-ական** վերջավորությունը՝ վերևում ավելացնելով **-ներիդ** և  
ոչ թե **-ների**: Թվում է՝ ձևավորվում է Չարենցի ձեռագրերը սխալներով տպագրելու  
վատ ավանդույթ:

<sup>19</sup> **Ե. Չարենց**, Վերջին խոսք, էջ 6:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 7:



**Դարեր ու դարեր քրտինքով եռուն,  
Անլուր տքնությամբ, եռանդով, արյամբ  
Չի բեղմնավորել իր հողն հայրենի,—  
Այլ խժռել է լուկ, անգամ հայրերի  
Սերմանած վերջին ծաղիկը բուրյան...<sup>21</sup>**

Հայրենիքի հանդեպ ունեցած անսահման սերը միայն կարող էր Չարենցին մղել գրելու նման մռայլ, ծանր տողեր: Չարենցագիտության մեջ հաճախ է խոսվել հայրենիքի, նրա անցյալի ու հայ ժողովրդի հանդեպ ունեցած Չարենցի այս վերաբերմունքի մասին՝ գնահատվելով որպես նիհիլիզմ՝ ժխտողականություն: Անահիտ Չարենցը անգամ զուգահեռներ է անցկացնում «Գիրք ճանապարհի» և «Երեքի դեկլարացիայի» միջև՝ գրելով. «Ժխտումներն ու հակասությունները, որ երևան են գալիս «Գիրք ճանապարհի» գնահատումների մեջ, երբեմն շատ հաշտ են «Երեքի դեկլարացիայի» գաղափարներին ու ոգուն, չնայած այժմ ավելի քան հանդարտված են ու զուսպ...»<sup>22</sup>: Արտաքին, ֆորմալ նմանություն թերևս կա. երկու դեպքում էլ Չարենցն ընդդիմանում է անցյալի արժեքներին: Սակայն այն համեմատությունը, որն արվում է «Գիրք ճանապարհի» ու «Երեքի դեկլարացիայի» միջև, այն կարծիքը, թե «Գիրք ճանապարհիում» Չարենցի տված գնահատականները **շատ հաշտ են** 1922-ի դեկլարացիայի **գաղափարներին** ու հատկապես **ոգուն**, հազիվ թե տեղին են ու ճշմարիտ: Ակնհայտ փաստ է, որ Չարենցը շատ վաղուց էր հրաժարվել հիշյալ դեկլարացիայում ուղենշված գաղափարական շավիղից և մեթոդներից ու այլևս չէր կարող վերադարձ կատարել դրանց: Եվ դրա խոսում վկայությունն են թե՛ «Էպիքական լուսաբացը» «Մուսայիս» բանաստեղծությամբ, թե՛ հենց նույն «Գիրք ճանապարհի»:

Եվ այսպես, նիհիլիզմ՝ ժխտողականություն: Բայց ի՞նչն է ժխտում Չարենցը, ինչի՞ն է դեմ: Անցյալի խեղճության ու թշվառության զովերգումն է ժխտում, ժխտում է պարտությունները որպես հերոսական հաղթանակներ ներկայացնելու ձգտումը, ժխտում է պատմությունն ու ճանաչված ներկայացնելու մոլուցքը, սեփական անհաջողությունների մեջ միշտ ուրիշներին մեղադրելու մարմաջը: Եվ դա անում է վճռականորեն ու հաստատականությամբ, քանզի իրեն համարում էր առաջնորդ ու հոգևոր պետ, հայրենի հողի «վաղվաղակի մշակ» ու «աննինջ սերմնացան»:

**Եթե զգում ես, քո մեջ ոգի՛ քերթողի,  
Ստեղծողի, կերտողի – առաջնորդի նոր,—**

<sup>21</sup> Նույն տեղում: Իմիջիայլոց, նկատենք մի հետաքրքիր հանգամանք. մեջ բերված վերջին հատվածում Չարենցը գրում է. «Այն ո՞ր երջանիկ ժողովուրդն է, որ // Դարեր ու դարեր քրտինքով եռուն...» և այլն: Իհարկե, նա տրամագծորեն հակառակ իմաստով է գործածում **երջանիկ** բառը. իրականում ոչ թե երջանիկ, այլ դժբախտ է նման ժողովուրդը: Սա մի յուրահատուկ հնարան է, որ Չարենցը սիրում է կիրառել: Մի ուրիշ բանաստեղծության մեջ կարդում ենք. «Թմբուկ են խփում, հարսանիք է, // Հարսանիք է երկրում՝ աշնանային, // Արշավում է անողոք գալիքը // Ջգեցած զգեստներ մահի... // Ինչ **լավ** է նախորդան երկիր, // Որ բերքիդ երկունքից առաջ, // Թխարան քվեց անարատ // Հելիկոնը սրբազան երգիդ...» (նույն տեղում, էջ 93): Բնականաբար, ոչ թե **լավ**, այլ վատ է:

<sup>22</sup> **Ա. Չարենց**, Չարենցի ձեռագրերի աշխարհում, Եր., 1978, էջ 18:

**Եթե անցնել ես ուզում – դժվարին ուղի,–  
Եթե տանել ես ուզում – և գիտես, թե ո՛ւր<sup>23</sup>:**

Այս վեհ գիտակցումից է ծնվում ցանկացած բաց, ցանկացած արատ ու թերություն նաիրյան կույր զավառամտությամբ չկոծկելու և անվարան խարազանելու վճռականությունը: Սա է իրականությունը:

1936 թ. հուլիսի 9-ը Չարենցի կյանքի ամենաողբերգական օրերից մեկը եղավ. այդ օրը սպանվեց ՀԿ(Բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Աղասի Խանջյանը, որի հետ Չարենցը չափազանց մտերիմ էր: Խանջյանը Չարենցի համար քաղաքական ու նաև հոգևոր իմաստով նեցուկ էր, նրա գաղափարակիցն էր ու հովանավորը: Եղբրական այս դրվագը ոչ միայն իր ազդեցությունն ունեցավ Չարենցի ներաշխարհի վրա, այլև խոր հետք թողեց նրա ստեղծագործության մեջ. Խանջյանի մահով լույս աշխարհ եկավ «Դոֆին նաիրական» սոնետների շարքը: Այս շարքը բաղկացած է յոթ սոնետներից, նվիրված է Աղասի Խանջյանի հիշատակին: Սոնետները վերնագրված են «Սոնետ առաջին», «Սոնետ երկրորդ», «Սոնետ երրորդ» և այսպես մինչև յոթերորդը՝ «Սոնետ յոթերորդ և վերջին», և ունեն նաև խորագրեր: Առաջին սոնետով սկսվում է շարքը, որով ներկայացվում է Խանջյանի հոգեհանգիստը.

**Նա պառնկած էր նախկին սեղանատան միգում,  
Հին սեղանի վրա երկայնքն ի վար դրած  
Իր դագաղում փայտյա,– և ճակատին նրա  
Քստմնելի՛ հանգչում էր ծաղիկների մի կույտ<sup>24</sup>:**

Ջանազան նրբերանգներով նույն ողբերգական պատկերն ենք տեսնում նաև հաջորդող երկրորդ և երրորդ սոնետներում, որոնք համապատասխանաբար կրում են «Դոֆին» իրական» և «Մայրը» խորագրերը: «Մայրը» սոնետում ներկայացվում է Խանջյանի մոր ողբը.

**Նա մազերն էր փետում, և ճանկռելով երեսը՝  
Իր զավակի մեռած ձեռքին կառչած,  
Թառանչո՛ւմ էր, կանչո՛ւմ աղերսածայն.  
«Ո՛վ քեզ այսպես արեց, ո՞վ, Աղասի՛...»<sup>25</sup>:**

Եվ ահա չորրորդ սոնետից սկսած, որը վերնագրված է «Շրթունքները», Չարենցն այս շարքի ստեղծագործական հյուսվածքի մեջ մի հետաքրքիր գիծ է մտցնում, որը շարունակվում է մինչև վերջին սոնետը՝ դառնալով «Դոֆին նաիրականի» լեյտմոտիվը. դագաղում պառնկած Խանջյանի հոգեհանգստի դժգույն պատկերներին հանկարծ միախառնվում է Արայի ու Շամիրամի մասին պատմող հնօրյա ավանդազրույցը: Սկսում են աղոտ կերպով ուրվագծվել այն շեշտերն ու տրամադրությունները, որոնք ասես նախապատրաստում են ընթերցողին՝ ընկալելու այս ստեղծագործության հիմնական արարը, որը, աստիճանաբար զարգանալով հաջորդ սոնետում («Լեգենդը»), վեցերորդում հասնում է իր կուլմինացիոն կետին: Սոնետը վերնագրված է «Մահ լեգենդին».

<sup>23</sup> Ե. Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Եր., 1983, էջ 103:

<sup>24</sup> Ե. Չարենց, Վերջին խոսք, էջ 171:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 175:

**Եվ– նայելով անկիրք շրթունքներին նրա՝  
Իմ նաիրյան ոգին աղերսակոծ ոռնաց.–  
«Քանիերո՞րդ անգամն է, որ՝ պարտությամբ հառնած՝  
Գերեզման են իջնում, մանուկ Արա...»**

**Տրված սիրով անմեռ իր Նվարդին.– Առ նա՝  
Խնկարկելով արյո՛ւնն իր հուրհուրան,  
Քանիերո՞րդ անգամ, օ՛, Շամիրամ,  
Չոհվի արքան մանուկ, որ դո՛ւ զրույց դառնաս...**

**Արդեն հոգնե՛լ ենք մենք այս անիմաստ բախտից,  
Դու մինչև ե՞րբ, Արա՛, մանուկ մնաս,  
Եվ մինչև ե՞րբ,– այսպես,– մահո՛վ հաղթես...  
Լավ է նաչից էլ քո չբարձրանա՛ս,  
Եվ պայքարի ելնեն առաջնորդներ պարթև –  
Որ մեռնելով՝ պարտվե՛ն, կամ ապրելով՝ հաղթե՛ն ...<sup>26</sup>**

Այստեղ արդեն Չարենցը վերանում է բուն իրողությունից՝ Խանջյանի եղերական մահից. Խանջյանի մահը լուր միջոց է, որով Չարենցը կրկին անդրադառնում է հայոց պատմությանը: Իր ողջ ահավորությամբ ու սարսափով կրկին վեր է բարձրանում նաիրյան միջը, որ Չարենցը դեռ տարիներ առաջ էր թաղել՝ համարելով մեռած: Պատահական չէ, որ սոնետը վերնագրված է «Մահ լեզենդին»: Հնօրյա միջը՝ վաղուց մեռած որպես մի «արնաքամ դիակ» կամ «ուղեղային մորմոք» ու «սրտի հիվանդություն», հառնում է այս անգամ Արայի ու Շամիրամի դարավոր լեզենդի տեսքով, ու Չարենցը զրոււմ է. «Իմ նաիրյան ոգին աղերսակոծ ոռնաց»: Անվերջ կրկնվում է նույն մղձավանջը, որ նզովքի պես հետապնդում է հայ ժողովրդին. դեռ որքա՞ն պիտի շարունակվի այսպես, մինչև ե՞րբ: Դեռ որքա՞ն պիտի շարունակենք մեռնել՝ կարծելով, թե հաղթել ենք մահով: Մի՞թե անկարելի է, որ պարզապես հաղթենք ապրելով և ոչ թե մեռնելով. «Արդեն հոգնե՛լ ենք մենք այս անիմաստ բախտից»:

Հետաքրքիր է՝ ինչու է Չարենցն ընտրել հենց Արա Գեղեցիկի ու Շամիրամի լեզենդը: Նախևառաջ Արան մեռնող և հառնող աստվածություն էր՝ բնության խորհրդանիշը, որը պարբերաբար կրկնում էր իր «երթը»՝ անվերջ մեռնելով, որ նորից հառնի, և անվերջ հառնելով, որ նորից մեռնի: Սրանով նա իր մեջ էր խտացնում հայոց պատմության ողջ ընթացքը, որը «մեռնելու և հառնելու» մի անվերջանալի շղթա է: Եվ ապա Արան մեր պատմության առաջին անձն է, որ հաղթում է մեռնելով. փաստորեն, պատերազմում զոհվելով Արան պարտվում է Շամիրամին, բայց և միաժամանակ «հաղթում» է, քանի որ Շամիրամը չի հասնում իր նպատակին: Այսպիսով, Արան սկիզբ է դնում մեր «բարոյական հաղթանակների» շարքին, որ հետագայում ուղեկցելու է մեզ մեր ողջ պատմության ընթացքում: Դրանցից ամենանշանավորն Ավարայրն է, որ, անկասկած, իր կնիքն է թողել բազում սերունդների մտածողության ու հոգեկերտվածքի վրա: Չարենցն այն համարում է «սուտ Ավարայր», հերթական միջ, հեքիաթ, որով

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 178:

դարեր շարունակ կերակրվել ենք: Մեզ պետք չեն հաղթանակներ մահվան գնով. մահը միշտ էլ մահ է, պարտություն՝ անկախ նրանից՝ «իմացյալ» է, թե՛ «ոչ իմացյալ»: Սա է «Մահ լեզենդին» սոնետի ու նաև ամբողջ «Դոֆին նաիրական» շարքի առանցքային գաղափարը: Սա է Չարենցի համոզմունքը:

«Երկիր Նայիրի» վեպում Չարենցն ազդարարեց նաիրյան միֆի վախճանն ու ավետեց նոր կյանքի ծնունդը, որ սկսվում էր Հայաստանի խորհրդայնացմամբ: Սակայն Խանջյանի մահով Չարենցի համար «իր հզոր պարտությամբ» վերստին հարություն առավ հնօրյա գրույցը՝ ապացուցելով, որ պատմական ու քաղաքական տարբեր իրողություններում, տարբեր ժամանակներում ու հասարակարգերում չի փոխվում այն, ինչը դարեր ի վեր կրում է ցեղն իր մեջ՝ որպես գենետիկ կոդ, որպես արյան բաղադրություն: Հենց սրա գիտակցումն է, որ մթագնում է այն լավատեսական շողը, որ մի պահ առկայծում է «Դոֆին նաիրականի» վերջին՝ յոթերորդ սոնետում: Որքա՞ն պիտի շարունակվի դաժան մղձավանջը, դեռ որքա՞ն պիտի զոհվի Արան, որ Շամիրամը գրույց դառնա, վերջապես պիտի գա՞ մեկը, որ մեր հաղթության և ոչ թե պարտության լեզենդը պարզի վեր:

**Իմաստուն է միայն քառուղիներ հարթող  
Վաղվա հաջորդը քո այն երջանիկ,–  
Որ պիտի գա, գիտե՛մ – և աճյունի հետ քո  
Մեր հաղթության լեզենդը մահվան նաչից հանի...**

Սակայն... Միննույն է.

**Որքան իշխեն՝ թող նոր նախարարներն այսօր  
Շամիրամի մահճին, գանակոծեն իր դին,–  
Նա կհառնի կրկին՝ իր պարտությամբ հզոր...<sup>27</sup>**

Արդեն տեսանք, թե ինչպիսին էր Չարենցի վերաբերմունքն առ հայրենի անցյալը: Իսկ ինչպիսի՞ն էր ապագայի հայրենիքի նրա պատկերացումը, ո՞րն էր վաղվա հայրենիքի չարենցյան տեսլականը: Տերյանի պես Չարենցն էլ, անշուշտ, կարևորում էր հայրենիքի ոգեղենության գաղափարը: Եթե ժամանակին այդ ոգեղենության խորհրդանիշներն էին Նարեկացին ու Քուչակը («Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա»), ապա 1936-ին դրա մարմնացումը Կոմիտասն էր: Կոմիտասի կերպարում ամբողջանում էր ողջ հայ ժողովուրդն իր տարագրյալի բախտով ու դառը պատմությամբ: Կոմիտասն այն բացառիկ ազգային երևույթներից էր, որը ժողովրդի հոգում սրբացվել ու պարուրվել էր լուսապսակով դեռ իր կենդանության օրոք: Եվ Չարենցն իր ստեղծագործությամբ անպայման պիտի անդրադառնար նրան: Դրա համար առիթ է դառնում Կոմիտասի մահը (1935 թ., հոկտ. 22) և հատկապես նրա աճյունի՝ հայրենիք փոխադրումը (1936 թ., մայիս 27): Շուրջ երկու տասնամյակ արտասահմանում դեզերող «Հազարամյա մեր հանճարը» կրկին վերադառնում է հայրենիք՝ խառնվելու այն հողին ու ժողովրդին, որ մի օր իրեն ծնել էր: 1936 թ. մայիսի 28-ին Կոմիտասի աճյունը հանձնվում է հողին այժմ իր անունը կրող այգու պանթեոնում: Չարենցի համար դա մեծ իրադարձություն էր, որն էլ սկիզբ է

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 179:

դնում նրա «կոմիտասյան» ստեղծագործությանը, որի գագաթնակետը, անշուշտ, «Requiem Aeternam. Կոմիտասի հիշատակին» պոեմն է: Չարենցը երկար է մտորել այս ստեղծագործության շուրջ. այդ են վկայում պոեմի վերնագրի՝ շուրջ մեկուկես տասնյակի հասնող տարբերակները. «Վերադարձի մահերգ», «Կոմիտասի հետ», «Ռեքվիեմ հավիտենական», «Երգ մահվան և վերադարձի», «Չավերժական մահերգ», «Վերադարձ ու մահ», «Չայրենական հանճար», «Չամայնացյալ աճյուն», «Չամայնացյալ հող» և այլն: Չարենցի այս պոեմը ձոն է Կոմիտասի հիշատակին: Այն գրեթե զուրկ է զանազան դեպքերի և իրադարձությունների նկարագրությունից. միակ դեպքը, հենց որի վրա էլ կառուցվում է ստեղծագործությունը, Կոմիտասի վերադարձն է հայրենիք.

**Չայրենի երգն ես դու մեր՝  
Վերադարձած հայրենիք:–  
Դեմքիդ տանջանքն է դրել  
Անագորույն մի կնիք...<sup>28</sup>**

Ահա վերադարձի լուրն ավետող այս տողերն են, որ դառնում են պոեմի լեյտամոտիվը և, զանազան ձևերով ծավալվելով հետագա ողջ շարահրանքում, ամբողջանում պոեմի վերջին ութնյակում.

**Կիսադադվի՜ վերջապես  
Խոնջած աճյունը քո հար –  
Դարձած մոխիր կենսաբեր,  
Դարձած ավյո՞ւն, դարձած քար:–  
Անէացա՞ծ, սրբացած  
Կապրի ոգիդ հմայող՝  
Դարձած ելնո՞ղ երգի ծայն –  
Եվ հայրենի՜ դարձած հող...<sup>29</sup>**

Կոմիտասը վերադառնում է հայրենիք, որպեսզի իրենով հարստացնի հայրենի հողը՝ ինքն էլ դառնալով հայրենի հող, կենսաբեր մոխիր: Չարենցը հավատում է, որ նույն կերպ, նույն բախտով

**Վերադառնա՞ն պիտի դեռ  
Չայրենի հողը բուրյան՝  
Իբրև նորո՞գ երկրի տեր՝  
Ե՛վ Թումանյան, և՛ Տերյան:–  
Շիրիմներից իրենց որբ  
Իրենց դարձին են նայում  
Ե՛վ Դուրյանի սիրտը բորբ,  
Ե՛վ Մեծարենցն հմայուն<sup>30</sup>:**

Սա է հայրենիքի ոգեղենության Չարենցի ընկալումը: Բնականաբար սա չպետք է համարել ազգային մեծությունների աճյունների՝ հայրենիքում վերաթաղելու մի սոսկական գաղափար: Ամենևին ո՛չ: Սա շարունակու-

<sup>28</sup> Ե. Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, էջ 305:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 344:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 342:

թյունն է «Գիրք ճանապարհի»՝ գալիքի քաղաք կառուցողներին ուղղված յոթ հանճարեղ խորհուրդներից այն մեկի, որում ասվում է.

**Քանզի մեռյալների մոխիրն է ամենապինդ կիրը,  
Ամենապինդ շաղախը և առիավատչյան,–  
Եվ նրանով է դառնում երկիրը – երկիր,  
Եվ ժողովուրդը – ժողովուրդ, և գալիքը – գալիք՝  
անհողդողդ ու անճառ...<sup>31</sup>**

Այսինքն՝ առանց անցյալի մշակութային հենքի, առանց հոգևոր արժեքների Չարենցը չէր պատկերացնում ապագայի Չայաստանը: Սա հենց այն գաղափարն է, որը Տերյանը ձևակերպում էր որպես «հայության հավաքում» կամ «հայության կազմակերպում», որպես «կուլտուրա» կամ «կուլտուրապես կազմակերպված ժողովուրդ», կարճ ասած՝ որպես «հոգևոր Չայաստան»: Սակայն ի տարբերություն նույն Տերյանի, որն ավելի շատ միակողմանիորեն շեշտում էր հոգևոր հայրենիքի դերը՝ գրելով. «Չկամենանք շքեղ շենքերի հայրենիք դարձնել մեր հայրենիքը, հոգու և մտքի հպարտությամբ ճոխացնենք նրան»<sup>32</sup>, Չարենցը հավասարապես կարևորում էր նաև նյութական հայրենիքը: Կերտելով գալիքի հայրենիքի իր տեսլականը՝ նա կարևորում էր դրա թե՛ հոգևոր և թե՛ նյութական բնույթը՝ պայմանավորելով դրանք մեկը մյուսով: Նա քաջ գիտակցում էր, որ լոկ մշակութային հենքի վրա հնարավոր չէ կառուցել մնայուն երկիր. որպես կանոն, հզոր են այն երկրները, որոնք հարուստ մշակույթից ու հոգևոր արժեքներից զատ ունեն նաև զարգացած տնտեսություն, քաղաքաշինության լավագույն ավանդույթներ: Հիշենք, թե նա որքան մանրամասնորեն է նկարագրում «Գանգրահեր տղան» չափածո նովելում ապագայի Երևանն իր տներով, գործարաններով, կանաչ պարտեզներով ու առատ ծաղիկներով.

**Շոսսեի երկու կողմերում ահա  
Տներ, փողոցներ ու գործարաններ,  
Կանաչ պարտեզներ, ծաղիկներ առատ,–  
Այդ ո՞վ է արդյոք այսքանը ցանել:  
Ընկած են տներն իրարից հեռու,  
Գործարանները մեջընդմեջ կեցած,  
Ո՛չ ծուխ, ո՛չ փոշի.– և լույս տներում –  
Ժիր մարդիկ ահա՝ դեմքերին ծիծաղ<sup>33</sup>:**

1936-ին գրված «Մահվան տեսիլ» բանաստեղծության մեջ նույնպես հանդիպում են ապագայի քաղաքի պատկերները՝ կերտված նույնքան մանրամասնորեն ու նրբին.

**Պողոտանե՛ր, փողոցներ՝ բուրրածիզ երկարած,  
Իսկ կենտրոնում երկնահաս, գրանիտյա մի բազին:**

.....

<sup>31</sup> Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 391:

<sup>32</sup> Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 316:

<sup>33</sup> Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 103:

**Սյունաշարքե՛ր, տերրասնե՛ր, աստիճաննե՛ր մարմարե,  
Եվ պարտեզնե՛ր ոսկեզօծ, շատրվաննե՛ր երգածայն...  
Աշտարակնե՛ր երկնահաս և կամարնե՛ր կորանիստ,  
Քանդակազօծ կարնիզներ, պատուհաններ նուրբ հատած.  
Ե՛վ մարմարիոն մարմնագույն, և՛ զանգրահեր գրանիտ  
Ե՛վ վարդաբույր տուֆաքար, և՛ բիլ բազալտ սրբատաշ...**<sup>34</sup>

Բնականաբար պատահմունք, առավել ևս անհարկի երկարաբանության արգասիք չեն այս մանրակրկիտ նկարագրությունները. սա սոսկ Թամանյանի երևանյան տեսիլքի բանաստեղծական վերարտադրությունը չէ. սա նաև իր՝ Չարենցի երազն է, պայծառ երազն ապագայի արևոտ հայրենիքի...

Ահա այսպիսին էին Չարենցի ըմբռնումները հայրենիքի անցյալի, նաև ապագայի վերաբերյալ: Նա շատ հաճախ սուր, երբեմն ծայրահեղացված է ներկայացնում հայոց պատմության մթին էջերը: Սակայն հիմնական ելակետը մեկն է. սեփական անհաջողությունների պատճառը չփնտրել այլ տեղ, քան սեփական պատմության մեջ, որը յուրաքանչյուր ազգ ինքն է կերտում: Չարենցն ունեցավ արիություն և համարձակություն այդ դժվարին ժամանակներում բարձրաձայնելու ազգային խնդիրների մասին, իսկ այդ խնդիրները սոսկ մոտակա անցյալին չէին վերաբերում, այլ մեր ամբողջ պատմության ընթացքին: Հայացքը հառած անցյալին՝ նա փորձում էր տեսնել հայրենիքի ապագան: Իսկ ի՞նչ է ապագան: Չէ՞ որ այն ժամանակից և իրականությունից կտրված մի ինչ-որ անորոշություն չէ: Այն, ինչ անցյալ է այսօր, ժամանակին նախ եղել է ապագա, այնուհետև դարձել ներկա և նոր միայն՝ անցյալ: Ուստի, իմանալով անցյալը, հնարավոր է մոտավորապես պատկերացնել, թե ինչ կարելի է ակնկալել գալիքից: Ինչպիսի անցյալ ու ներկա որ ունի ազգը, նույնպիսին էլ կլինի նրա ապագան, ասել է թե՛ «զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն եւ հնձեսցէ»: Իսկ Չարենցը զիտեր այս պարզագույն ճշմարտությունը...

**ВАГЕ ГУКАСЯН – Умирающая и оживающая легенда.** – В настоящей статье сделана попытка рассмотреть взгляды Чаренца на прошлое армян с исторической и социально-политической точек зрения. Проанализировано отношение Чаренца к прошлому и будущему, мифу и действительности, духовному и материальному. Ретроспективно обозреваются произведения, написанные после 1916 г., от «Ваагна» до «Книги пути», вплоть до «Дофина Наирийского» и «Раздумья», созданных в 1936 г. Проводятся параллели между чаренцевским и терьяновским восприятиями страны Наири.

**VAHE GHUKASYAN – The "Dying and Reviving" Legend.** – In the article an attempt has been made to observe Charents' attitude towards the past of Armenia both from the historical and social-political points of view. The author presents the views of Charents about the past and future, about the myth and reality, about the spiritual and material. In the course of analysis the works written by the author within twenty years (1916-1936) are retrospectively examined, that is from "Vahagn" to "The Book of The Way", "The Dauphin of Nayiri" and "The Thought". A parallel is drawn between Charents' and Teryan's perception of the idea "Nayiri".

<sup>34</sup> Ե. Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, էջ 25: